ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.10.2012թ.
182-ի 9

ՀՀ մշակույթի նախարար
տիկին Հասմիկ Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի տիկին Պողոսյան,

2012թ.-ի սեպտեմբերի 4-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնական հանդիպումների ժամանակ տրվող հյուրասիրությունները ո՞ր կազմակերպությունը կամ անձն է իրականացնում,
2. Եթե ընտրվում է անձը կամ կազմակերպությունը, ապա ի՞նչ սկզբունքով եւ ի՞նչ ժամկետով,
3. 2012թ.-ի բյուջեով որքա՞ն գումար է նախատեսվել ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնական հանդիպումների ընթացքում տրվող հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուտեստների և խմիչքների համար նախատեսվող գումարները ներկայացնել առանձին),
4. 2012թ.-ի հունվարի 1-ից մինչ օրս բյուջեով նախատեսված գումարից որքա՞նն է ծախսվել հյուրասիրությունների համար (խնդրում ենք ուտեստների և խմիչքների համար ծախսված գումարները ներկայացնել առանձին):

Ի պատասխան՝ ՀՀ մշակույթի նախարարությունը հայտնել է, որ հասարակական կազմակերպության ձեւաթղթով եւ անունից հարցում կատարելու իրավասություն ունի կազմակերպության նախագահը կամ սահմանված կարգով նրան փոխարինող անձը:

Ուստի, կից ներկայացնում եմ ԻԱԿ-ի անունից հարցումներ ուղարկելու իմ լիազորությունը հաստատող լիազորագրի պատճենը եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում եմ տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան